

**Գաղափարական և գեղարվեստական զուգահեռներ
Ե. Չարենցի «Խմբապետ Շավարշը» և «Դեպի լյառն Մասիս» պոեմներում**

Գայանե Մալումյան

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2024.1-97>

Հանգուցային բառեր. գիշեր, առավոտ, կասկած, փրկության ելք, հիասթափություն, երգի միաձուլյ հնչողություն

Խոսքը «Խմբապետ Շավարշը» (1928 թ.) և «Դեպի լյառն Մասիս» (1933 թ.) պոեմների մասին է, որոնք շատ ընդհանրություններ ունեն և նույնքան էլ տարբերություններ: Ներքին շերտերը, կառուցվածքային բնույթը, հերոսների գիշերային տազնապները նույնանում են ԿԱՍԿԱՄԻ հոգեխարտիչ ընդհանրությամբ: Մի դեպքում՝ երևույթների և մարդկանց գործողությունների հանդեպ (պարտություն, ռուսահայեր, Դրո), մյուս դեպքում՝ «իր սրտի յուրաքանչյուր նյարդով ու արյունով գրված» սեփական ստեղծագործության նկատմամբ: Երկուսի մենամտորումներն էլ դառնում են պոեմի առանցքը: Երկուսն էլ հայրենիքի զինվոր են. մեկը գենքի, մյուսը՝ գրչի: Երկուսն էլ «համր դառնության» մեջ ոչ մի խոսք չեն արտաբերում. գիշերվա խավարում անցյալի հիշողություններին են գերի: Երկուսին էլ տազնապեցնում է «կապարե ներկան», և անտեսանելի գալիքի հանդեպ ունեցած խռովքի պատճառները փնտրում են անցյալի մեջ: Ժամանակային երեք հոսքերը միաձուլված են իրար:

Երկու տարբեր անհատականություններ, որ հիշեցնում են Չարենցի հայտնի զուգահեռը Վ. Տերյանի և Գ. Քալաշյանի միջև. «Երկու պոետ: Երկու քաղաքացի: Մեկը դաշնակցական, մյուսը՝ բոլշևիկ: Ես գիտեմ, որ եթե «Այն» աշխարհը լիներ, եղբայրաբար կհամբուրեին իրար: Ու տխուր ր աչքերով, սրտամուխ ու սրտատրոփ կնայեին ներքև՝ ընդհանուր «Տան» հեռու տառապանքներին: Եվ միասին կլային և կուրախանային «Տան» գլխին եկած ուրախությունների և տխրության համար» [7, 386-387]:

Շավարշ Բասենցյան և Խաչատուր Աբովյան: Մեկը՝ խմբապետ, մյուսը՝ ... ԱՌՈՎՅԱԼ: Գրեթե մեկդարյա ժամանակային տարբերությամբ ապրած այրեր: Շավարշ Բասենցյանը (Կարինե Քոթանջյանի հոգևոր եղբայրը) դաշնակցական գործիչ էր, 1921 թ. փետրվարյան խռովության մասնակից, որի պարտությունից հետո հեռացավ Իրան, մեկ տարի հետո վերադարձավ Տուն, ձերբակալվեց, ազատվելուց հետո նույնիսկ Երևանի քաղխորհրդում աշխատեց: Նա իսկապես բազմիցս բարձրաձայնել և դատապարտել էր իշխանության անգործությունը արևմտահայ գաղթականների հանդեպ: Ի վերջո, ինչն անխուսափելի էր, 1937 թ. գնդակահարվեց: Խորհրդային տարիների գրաքննադատությունը նրան չէր կարող ազգանվեր ու հայրենասեր կոչել, ընդհակառակը, պոեմի դրվագները մատնանշելով ներկայացնում էին իբրև մոլեգին հարբեցող ու դաժան մատուցերիստ, իմա՝ դաշնակ: Բհարկե, ոչ բոլոր քննադատները: «Ապավինելով Նեմեսիսի՝ վրեժի ուժին, նա տրվում է ինքնախոշտանգման: Դա հանցանքի և պատժի հոգեբանական բացահայտումն է»,– գրում է Ս. Աղաբաբյանը՝ պոեմի ժանրը սահմանելով որպես «դրամատիկական տեսիլ», որտեղ գործողության ընթացքն է, ոչ թե ավարտը [5, 107-108]: Հ. Թամրազյանը այն համարում է «մեր առաջին քաղաքական-արդիական պոեմը՝ գրված իրապաշտական շեշտված ռճով» [6, 337]: Երկու քննադատների դիտողունակ հայացքը առաջնային է համարում հերոսի հոգեբանական ծանր կացությունից ծնված պատճառների բացահայտումը. ավելի շատ շեշտը դնում են նրա վիճակը հասկանալ-բացատրելու, քան պարսավել-մեղադրելու վրա: Իր բնույթով պոեմը ռեալիստական է՝ նատուրալիզմի շերտերով: Դ. Գասպարյանը գտնում է, որ Չարենցը

առանց համահարթեցման է ներկայացրել Շավարշի քաղաքացիական և անհատական դրամատիկ կերպարը:

Հուշագիրները վկայում են, որ Շավարշ Բասենցյանը (ինչը բնական էր) շատ դժգոհ է եղել պոեմում պատկերված իր կերպարից՝ համարելով, որ գույները խտացված են, շատ դեպքեր՝ հորինված: Բայց հենց Չարենցի կերպարակերտման շնորհիվ նույնիսկ անհեռատես մտքի և անգնե աչքի առջև կանգնում է «հայ ցեղի արգանդից էլած» առնական մարդը՝ ազգափրկիչ հերոսը, որը խաբված էր, հուսահատ և անելանելիությունից թևաթափ:

Կասկածները, որ տանջում էին նրան, պատկերված են շոշափելի և տազնապահարույց, քանզի դրանք հենց Չարենցին են: Նրա հոգում ևս աստիճանաբար էր խտացել իր իսկ գովերգած հեղափոխության հանդեպ խոր հիասթափությունը: Կասկածի մասնանելիք Չարենցի հոգին ընկավ ավելի վաղ՝ 1920 թ., երբ գրվեց «Մահվան տեսիլը».

Գուցե այդ է՛ս եմ, որ սրտով իմ լուսնահար
Ո՛չ մի կրակ հեռուներից ձեզ չբերի...

Փորձում էր Աբովյանի պես վանել «իր կյանքի միակ սրբազան գործի» հանդեպ զգացածը, բայց ապարդյուն.

Գիտակցության տակից,
իր էության մութ խորքերից,
ուր միտքը վախենում էր թափանցել —
Տազնապալից աճում էր ահանման մի բան՝
Կասկածի պես անորոշ ու անձև... [2, 44]:

Իբրև իսկական գաղափարակիր՝ Չարենցը անձամբ էր մասնակցել ազգային պայքարին՝ ի սպաս դնելով կյանքը, ինչպես և Շավարշը, որին թուրքերը բռնել ու 101 տարվա բանտարկության էին դատապարտել:

Չարենցը գրել էր հեղափոխության առաջնորդին գովաբանող ու մեծարող երկեր և փառաբանել էր հյուսիսից եկող փրկությունը, ինչպես Աբովյանը: Երկու պոեմների հերոսներն իրենց էությամբ Չարենցի երկփեղկված սիրտն են՝ ֆիզիկական և հոգևոր: Գուցե և փորձել է ոչնչացնել «սերունդների երթին ի վնաս» իր բազում գրվածքները, սակայն Աբովյանի պես էլ հոգում ինչ-որ տատանումներ են եղել, որոնք չէին կարող չլինել:

Եվ իր կյանքը ամբողջ եղել է սին մի հարց՝
Աննպատակ ուղղած և ամպաշեն... [2, 45]:

Այդ անպատասխան հարցը «իր և իր միջև» ընթացող ներքին պայքարից էր ծնվել, որը տարիների հետ ահագնանում էր:

Միթե սո՛ւտ է բոլորը և փորձա՞նք...
Միթե մուխ է բոլորը, ոգու սայթաքո՞ւմ,—
Եվ ամենը, որ եղել է կյանքում
Իր երազանքը սուրբ, իր ըղձանքը թաքուն —
Անիմա՞ստ է եղել... [2, 45]:

Չարենցը վերջին տարիների՝ «ինքնահաշտություն» հայցող խոհերը հանձնում էր թղթին՝ առանց դրանք տպագրված տեսնելու հույսի, ապավինելով դիպվածին, իսկ սերունդների հետ կիսվում էր նաև իր հերոսների միջոցով:

Աբովյանի վերջին գիշերվա մասին պատմել է նրա գերմանուհի կինը, և առաջին տողերը այդ հիշողություն բանաստեղծացումն են.

Գիշերը չէր քնել: – Քրքրել էր թղթերը,
Երկար թերթիկ թերթերը բազմաթիվ,
Օրագրեր, գրքեր, ձեռագրեր,
Իր խոհերի նման բազմապիսի,
Խոհեր՝ ուղղած դեպի սերունդները գալիք,
Ծրագիրներ կիսատ, կամ սկսված հագիվ,
Ո՛ւմ էր թողնում բոլորը... [2, 41]:

Կարծես հրաժեշտի և անդարձ հեռանալու տրամադրված ծերունի լինի 39-ամյա Աբովյանը (թե՞ Չարենցը), որին վաղվա օրը անվստահություն էր ներշնչում: Այս հիասթափությունը կար արդեն, և սրանից պիտի ծնվեր ԿԱՄԿԱՕԸ, երբ ձեռքն առնել իր «վերջին ճիգով հորինած» ԳԻՐՔԸ, որ թողնելու էր սերունդներին: Բիարկե, «ստեղծագործ մտքի ամենի թոփչի» արդյունքը, ուր նաև հայրենի անուշ բարբառն էր տոգորված «ընդվզո՛ւմի, խոհի՛, ոգու՛ ըմբոստությամբ», ոչնչացնելու միտքն անգամ համարժեք էր ինքնառնչնացման: Այստեղից էլ մի պահ զղջալու համոզիչ նահանջը.

Բայց ո՞չ ի՞նչ էլ լինի – այնուամենայնիվ
Հո չի՛ ստում կարկաչն այս բարբառի,
Այս երգեցիկ գրքի երգանման ձայնը,
Որ դիպչելով կյանքի հազարամյա քարին՝
Պիտի ճեղքե այդ քարը, այդ ժայռակուռ պարիսպը,
Պիտի բանա թեկուզ փոքրիկ կածան... [2, 45]:

Եթե ՎԵՐՔԸ Աբովյանի սիրտն ու հոգին էր, Չարենցի համար էլ իր ժողովրդի երեքուն ասպազան ամուր հիմքերի վրա դնելու թեկուզ փոքրիկ կածան գտնելը կյանքի նպատակ էր: Բայց կար մի էական տարբերություն. եթե «Վերք Հայաստանին» դեռևս ձեռագիր էր, այսինքն՝ Աբովյանը ընտրություն ուներ «խեղճության արդյունք» գիրքը ոչնչացնելու, Չարենցի երկերը ժողովրդի սեփականությունն էին դարձել անվերադարձ. այդ «սխալն» ուղղելն անհնարին էր: Մնում էր հետզհետե անագնացող ինքնախարազանումը, թե չի՞ արդյոք եղել իր ողջունած հեռուն Մի թիարան վատթար...

Իր ներբողը «Հեռու՛ մոտիկ ընկերներին...», այժմ թվում էր «անպտուղ վաստակ ու տքնություն երկար», անհատնելի ձիրքը զուր վատնելու, երգածի արձագանքը չլսելու փաստ: Հետո տետրապոփքոսում պիտի խոստովաներ.

Վաղ աղջամուղջն այնքա՛ն ըղձյալ Այգաբացի
Մայրամուտի փոխվեց արյունալիճ...
...ներբողներս՝ հղած ծագող Այգաբացին,–
Ողբ ու տրտունջ դարձան և փոխվեցին լացի [4, 195-197]:

Աբովյանը «օրհնվի է՛ն սեպտեմբեր» ասելուց հետո դեռ 20 տարի պիտի ապրեր և, անտարակույս, տեսներ ու ըմբռներ, որ Հայաստանի հանդեպ միմիայն գաղութային քաղաքականություն են վարում, որ այն ժամանակ «ռսի օրհնած ոտը» գուցե ազատեց «ղլբբաշի չար շնչից», սակայն բաղձալի ազատությունը երազ էլ մնաց: Չարենցը համբերատար սպասումի ժամանակ չուներ. փոխարենը անպատասխան հարցն էր ով է «երագել այդպես դաժան հոգու լուսավոր առավոտները անկրակ իրիկնաժամ» դարձնելով: Սեփական սխալները չէին անտեսվում. վկան՝ «Վահագն», «Ազգային երագ», «Պատմության քառուղիներով», «Զրահապատ «Վարդան գորավար» պոեմները: «Երկիր Նաիրի» վեպում նույնիսկ փորձեց երագանքի երկրից հրաժարվելու բացատրություն տալ. «Մի՞ թե տքնությանս վերջում, որպես նվիրական, սիրելի մի մեռել – չպիտի՛ պատկերանա ի՛նձ Երկիրը Նաիրի, որին

դամբանելու համար տանում եմ ես ահա խոհերիս տողաշար դագաղը – տանում եմ կամփիս հակառակ, որովհետև, այո՛, թաղել է հարկավոր բոլոր մեռելներին, որքան էլ նրանք սիրելի և հարազատ լինեն» [3, 57]: Իսկ հետո Շավարշի խոհերով արտահայտեց իր ներքին չբարձրաձայնվող ընդվզումը նրանց հանդեպ, ովքեր

Ուզում են տիրանան երկրին, բանակին,
Հաստատեն ռսացած մի իշխանություն... [1, 199]:

Բայց հենց ինքն էր առաջինը երգել «գովքը այգաբացի»՝ խորհրդայնացումը համարելով անդունդի եզրին կառչած հայրենիքի միակ փրկությունը: Ուրեմն առաջին քարը ի՞ր վրա պիտի նետվի: Մա՛ Չարենցը:

Այլ է Շավարշը՝ պայքարի մարտիկ՝ թերանալու և վախկոտության համար պատրաստ մեղադրելու նույնիսկ յուրայիններին.

Գյուղերում – ընկել է հավարը.
Լաչա՛ կ էր եղ գյուղերի գլխին քաշած... [1, 201]:

Նա թուրքի ձեռքից փրկել ու Ռուսահայաստան էր բերել մարդկանց բեկորներ՝ իր «աշիրաթը»: Նրա ուղեղում սեղմ, հատու բառաշար է. «Ցուրտ, մերկ, սով, տիֆ... Ամբողջ ճանապարհը – դիակներ, մահ... Ինչքա՛ն, ինչքա՛ն ընկան...Ով մնաց՝ մնաց» [1, 202]: «Խմբապետ Շավարշ»-ում անավարտության երանգ կա, որովհետև սա մի հատված է «Ապստամբություն» վիպապից. եթե Չարենցը ծավալվեր, եթե կարողանար անկաշկանդ գրել, շատ փակագծեր կբացվեին:

Գաղթի դժոխային ճանապարհի նկարագրությունը նմանաձայնության գեղարվեստորեն միաձուլ պատկեր է՝ ճոճում են սայլերը, ձիերը դոփում, շները ոռնում են (մարդկենդանի զուգահեռ՝ «միայն թե քաղցից չոռնար կինը»): Կոպելով ու կորուստներ տալով հասցրեց իբր ապահով տեղ.

Հասան: Թափվեցին կիսամերկ: Եվ ի՞նչ.
Մնացին երկնքի տակ բաց,
Ցուրտը հետևից, քաղցն առջևից –
Ոչ օգնություն, ոչ բան [1, 202]:

Նատուրալիստական ցնցող տեսարան կա, որը բազում հատորներից ավելին է վկայում իրավիճակի բարձիթողի լինելու մասին: Ութ տողում հինգ համեմատություն է օգտագործել.

Երկու **գառանցանքի նման** երեխաներ
Աչքերով ամեհի, ահարկու,
Ինչպես շները սովամահ, դաշտում դեգերող,
Հղի կանանց նման փորներն ուռած,
Մագիլների նման ձեռքերով
Հարձակվեցին Շավարշի փսխածի վրա –
Եվ սկսեցին լափել ազահաբար՝ ընկած
Երեսնիվայր մայթին, **ինչպես շներ**... [1, 208]:

Անձնուրաց մաքառումով հազար ու մի վտանգներից փրկես, հասցնես տեղ ու նման տեսարանի՝ ակնատես լինես... Մանձագերծ երևակայություն չէ սա, այլ դժնի իրականություն, որ «կարող է դարձնել մարդուն գետնահար մի սովեր նսեմ»:

Հերոսի կերպարը միագիծ չներկայացնելու նպատակն էր հետապնդում պոեմի թերևս ամենատպավորիչ հատվածը, երբ վրեժով լցված՝ թուրքական գյուղն էին ավերում: Թվում էր՝ Շավարշի մեջ մարդկային ոչինչ չի մնացել, սակայն նրա սրարշավ ընթացող ձին ծառա

եղավ գեղեցկության ամենահաղթ ուժի առջև. «Ցնո՞րք էր, զառանցա՞նք էր, տե՞նդ էր... Ձին սանձեց Շավարշը ու մնաց»: Համր հոսող լռությունը, կնոջ՝ սարսափով լի սև ու ջինջ աչքերը, որի դեմ սուրբ Գևորգի պես անշարժ ծառացել էր մուլեզին մարդասպանը. սա պատկերավորման դադարի արվեստն է: Ապա հակադրությունը. «Տեսարանը շքեղ էր, ինքը՝ գարհուրելի», և այդ գարհուրելին վախենում էր միայն, որ կին կոչվող այդ չքնաղ տեսիլը կանխան ու կցնդի... Մի դար տևած այդ վայրկյանը պիտի ուղեղի հեռավոր անկյուններում հավետ մնա ու երբեմն հիշողության մշուշը ճեղքելով՝ այնքա՛ն և պարզ ու կենդանի դուրս լողա: Ընթերցողի հիշողության մեջ էլ դաջվում է պատկերայնության այս բազմերանգ համանվագը:

Շավարշը անհենարան ու անդեկ տրվել էր «բացասման ոգուն». նա գոնե մի լուսավոր թերթիկ չունի, ինչպես Աբովյանը՝ Շառլոտա Շուլցի կապույտ ու թափանցիկ ցողի պես հոգին ակեյրժող նամակը: Սոսկ հոգեկան ճգնաժամի հասցնող հիշողություններ են՝ մեկը մյուսից սարսափելի.

Գյուղը դաշտ դարձրեց կարմիր հնձի...

Հետո լուսինը կարծես արյան մեջ էր լողանում...

Ուղեղում մշուշ էր՝ կարմիր, ալ, արյունաբբու... [1, 205]:

Չարենցը Շավարշի պես կոնկրետ մեղավորներ չէր փնտրում. նա մտավորական էր և գաղափարական անկում էր ապրում, ինչպես Աբովյանը: Սոսկ վրեժի չէր հետամուտ, այլ տեսնում էր երևույթն ամբողջության մեջ: Մտահոգությունը թելադրված էր մարգարեական կռահումներով: Իր և Աբովյանի ժամանակներում ասվածն ու արվածը կաղապարված են հենց այդ ժամանակի շրթաներով, բայց գալու է ապագայի հայր, և իրենց խոսքերը կուրորեն կրկնելու փոխարեն պարտավոր է կարգախոս դարձնել ծածկագրված պատգամները: Պիտի ըմբռնի, որ ազգի գոյաբանական փրկությունը, այո՛, հավաքական ուժի մեջ է, որ մաքուր պիտի պահել ապագայի «հունտը»: սերունդը: Սա էր Չարենցի կտակած դա՛ն ու դժվարին, սակայն առողջացնող դեղահաբը:

Աբովյանը գնաց դեպի Մասիսը. սա հասկանալի խորհրդանիշ է, մինչդեռ Շավարշը գինադևի մեջ էր և դեգերում էր ելք գտնելու անօգուտ որոնումների մեջ: Երբեմնի քաջ խմբապետը պարփակված պիտի մնա իր անպատասխան խոհերի անդունդում՝ «որպես լքված թավջութակի ձգված մի լար»:

Հիասթափություն-կասկած-երգի միաձուլյ հնչողությունը պարտրված է խմիչքի դառնությամբ. մուժով լցված: Հերոսը սթափ չէ հենց սկզբից, և «ամեն մի բաժակը քամած Երան դարձնում էր ավելի համր»: Չարենցը նորանոր պատկերներ է ստեղծում.

Անդադար խմում էր և հայացքը բիրտ էր...

Գլուխը ծանրացավ, լցրեց ու խմեց.

Ձեռքը խփեց սեղանին, հողը դողաց.

Խփեց ու խմեց: Ու ոչ մի բառ չասաց:

Խմեց, ու հոսեցին կրկին մտքերը

Իրարից ավելի պղտոր ու ծանր...

«Խմբապետ Շավարշ»-ում հերոսի խոհերն էլ, հիշողություններն էլ, փողոցն էլ, ամբողջ քաղաքն էլ թանձր մուժ-մշուշի մեջ են, և նույնիսկ առավոտը չի ցրում այն: Իսկ «Դեպի լյառն Մասիս»-ում մի անգամ է պատկերվում մշուշը՝ բիբլիական լեռանը պարտրված, և այն այգաբացի առաջին շողերի հետ հետզհետե ցրվում է:

Գեղարվեստական հետաքրքիր սկզբունքով է կերտված մոտեցող ԱՌԱՎՈՏԸ: Սա ևս կերպար է՝ ըստ արժեքի փոփոխվող իր ընթացքով: Նկարագրված է ուղիղ և փոխաբերական իմաստով: Տարբեր մոտեցումներ կան պոեմներում: «Խմբապետ Շավարշ»-ում դեպի

առավոտն ընթացող գիշերվա ծանր քայլերը հոգեմաշ սպասումով են լցված: Այստեղ աստի-ճանավորման սկզբունքն է՝ գույների հեզոգհետե խտացմամբ.

Առավոտը մոտ էր, բայց դեռ չէր բացվում.
Արդեն փողոցում ցրվում էր խավարը,
Մոտենում էր առավոտը, պղտոր բացվում,
Եվ բացվող առավոտը անտանելի մի բեռ էր,
Նախձիր պես բացվող առավոտվա ֆոնին
Կրակում էին տղերքը հայացքները դեպի լուսաբացը.
Համազարկը թռչում էր տանիքից – տանիք,
Առավոտվա միջով, որ նրանց պես հարբած էր:
Բաց կարմիր թանաքի նման Երևանի վրա
Թափվում էր հորանջող ու մզված այգը –
Եվ Եգորի հայիոյանքն էր միայն ողջունում նրան...
Արդեն առավոտ էր դառնում լուսաբացը...

Շավարշի առավոտն էլ արյունոտ էր՝ մաուզերի «արյան, մուժի, մահի տազնապի հնչնագրեր գծելով» [1, 207]:

«Դեպի լյառը Մասիս» պոեմում գեղարվեստական մոտեցումը տարբեր է. Առավոտը, եթե նույնիսկ էլք ցույց չի տալիս, երազած փրկության դուռ չի բացում, գոնե ցրում է սիրտ ճնշող գիշերային խոհերը: Ի տարբերություն մյուս պոեմի՝ «փողոցում լռություն էր ու ծանր խավար», այստեղ այգաբացը հենց սկզբում է՝ մեզ հարազատ կարմիր, կապույտ, ծիրանագույն գունային համադրությամբ.

Արևը դեռ հորիզոնից
Նոր էր փռել աղջամուղջը վաղնջական,
Եվ վաղ առավոտի ծիրանեզույն ֆոնին
Հեռվում երևում էր Մասիսը՝ կապույտ շղարշ հազած... [2, 41]:

Սա պատահական չէր. կառուցվածքային կերպը՝ «ավարտ-սկիզբ-ավարտ», հակադրվում է «սկիզբ-ավարտ» սկզբունքով ընթացող «Խմբապետ Շավարշին»: Աբովյանի սպասումը կարծես կանխորոշված գործողության նախասկիզբ է.

Արդեն մոտենում էր առավոտը և նա պիտի գնար:
Հետո խորասուզվեց – և մինչև առավոտի
Շողն առաջին ընկավ սենյակից ներս ...
Գիշերը չէր քնել... երբ դուրս եկավ սակայն,
Առավոտվա վեհությամբ թովված՝
Զգաց հանկարծ իրեն այնքա՛ն թեթև...

ԱՌԱՎՈՏԸ ազգափրկիչ այն խորհրդանիշն էր, որին միշտ էլ սպասում են կասկածից տառապող և երկբայության մթին խորխորասներում դեզերող հոգիները: Բայց գիշերվա մոայլ խոհերը՝ «ավտոմատիկ առնետների պես» հոգին կրծող, միանգամից չեն կարող նահանջել: Պիտի անցնի ԳԻՇԵՐԸ. հետո միայն պիտի բացվի ԱՅԳԸ:

Արդիական հնչողություն ունեն և՛ այս ԿԱՍԿԱՄԸ, որ ծանրորեն կախվում է մեր գլխավերևում՝ պատրաստ ահազանգ հնչեցնելու, և՛ առավոտվա սպասումը, որը հույսի բարակ, սակայն ապրեցնող թել է (հիշենք Մագութի Համոյի սրտամորոքը հավատը. «Օրը կգա, և կհառնի մշուշից Երկիր Նաիրի»): Ազգը պիտի հասկանա՝ հավաքական ուժն է փրկությունը: Բացահայտ կռվի կոչ չկա, բայց կռվից հրաժարվելը, սրտի դառնությունը խմիչքի մեջ թաղելը, «բացասման ոգուն» հանձնվելը ճանապարհի է դեպի ոչմիտեղ: Աբովյանը գնաց դեպի Լյառը՝ գտնելու (հեղինակի աղերսին համահունչ) «խոնջենքի անեզրական

կարոտ, խաղաղություն անխոհ, մահվան հանգիստ»: Շավարշն այդ հանգիստն էլ չգտավ: Չարենցը փրկության ճանապարհ չի մատնանշում. նա պատասխան չի տալիս, քանի որ հարցերն էին «ամպաշեն»: Բայց զգացվում է, որ դեպի Սասիս գնացող Արովյանի համար (թե՛ Չարենցի) հավատի և հույսի ջահը ժողովրդի գլխին պահելու առաքելությունը երբեք չընկճվելու ոգեղեն սկիզբն է:

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2024.1-97>

Օգտագործված գրականության ցանկ

1. Չարենց Ե., Երկերի ժողովածու 4 հատորով, հ. 2, Երևան, «Սով. գրող» հրատ., 1987:
2. Չարենց Ե., Երկերի ժողովածու 4 հատորով, հ. 3, Երևան, «Սով. գրող» հրատ., 1987:
3. Չարենց Ե., Երկերի ժողովածու 4 հատորով, հ. 4, Երևան. «Սով. գրող» հրատ., 1987:
4. Չարենց Ե., Անտիպ և չհավաքված երկեր, Երևան. ԳԱ հրատ., 1983:
5. Աղաբաբյան Ս., Եղիշե Չարենց, հ. 2 , Երևան, ԳԱ հրատ., 1977:
6. Թամրազյան Հ., Եղիշե Չարենց, Երևան, «Արևիկ» հրատ., 1987:
7. Չարենց Ե., Երկերի ժողովածու 6 հատորով, հ. 6, Երևան, ԳԱ հրատ., 1967:

Идейно-художественные параллели в поэмах Е. Чаренца «Хмбапет Шаварш» и «К горе Масис»

Գայե Մալումյան

Резюме

Ключевые слова: *ночь, утро, сомнение, путь к спасению, разочарование, монотонное звучание песни*

Внутренние пласты, характер структуры поэм «Хмбапет Шаварш» и «К горе Масис», ночные тревоги героев отождествляются с атмосферой всеобщего панического сомнения и становятся основным стержнем этих произведений. Герои обеих поэм (воин и интеллигент), встревожены «свинцовым настоящим» и в поисках причин своей тревоги по поводу незримого будущего устремляют свой взор в прошлое. Они становятся выразителями идейных тревог и сомнений автора, а сами поэмы рождаются из нарастающей с годами внутренней борьбы «между собой и самим собой». Если роман «Раны Армении» был сердцем и душой Х. Абовяна, то для Е. Чаренца целью жизни становится поиск хотя бы небольшого шанса водрузить шаткое будущее своего народа на прочный фундамент. Поколения, которые придут после Е. Чаренца, должны понимать, что экзистенциальное спасение нации заключается в собранности, что необходимо сохранять чистоту «семени», то есть поколения: этот горький и трудный, но в то же время жизнеутверждающий наказ завещал нам Е. Чаренц. Утро – это образ, меняющийся каждую минуту, своеобразная живительная нить.

В поэме «Хмбапет Шаварш» предутренняя тяжелая поступь ночи наполнена тревожным ожиданием, а в поэме «К горе Масис» утро, не указывая на исход, не открывая дверь желаемого спасения, тем не менее рассеивает ночные гнетущие мысли, становясь символом, которого ждут души, терзаемые сомнением и таящиеся в темных уголках нерешительности. Е. Чаренц не указывает на путь спасения, но для него миссия держать факел веры и надежды над людьми является духовным началом и призывом никогда не сдаваться.

Ideological and Artistic Parallels of “Khmbapet Shavarsh” and “Toward the Mount Masis” Poems by Y. Charents

Gayane Malumyan

Summary

Key words: *night, dawn, doubt, door to salvation, disappointment, monolithic sound of song*

The inner layers of the poems “Khmbapet Shavarsh” and “Toward the Mount Masis”, along with the structural nature and the nightly anxieties of the characters identify with the haunting commonality of doubt, thus becoming the core of the poems. The characters of both poems (a soldier and an intellectual) are troubled by the “lead present”. They seek the reasons for their anxiety over the unseeable future in the past. They are the manifestations of the author’s ideological anxieties and doubts. The poems originate from an inner struggle that raged throughout the years. If “Wound of Armenia” was Abovyan’s heart and soul, for Y. Charents the quest of even a small chance to put the shaky future of his people on solid foundations was a lifelong goal. The generations succeeding Charents should recognize that the existential salvation of the nation lies in the collective power, that they must keep the generation, the “seed” of the future pure: those are the bitter, onerous but healing messages bequeathed by Charents. The dawn is a character, changing its course by minute, a thread that makes us live.

In “Khmbapet Shavarsh” the heavy steps of the night leading to the dawn are filled with anxious anticipation. In the poem “Toward the Mount Masis” even if the dawn does not show a way out, does not open the door to a dreamed salvation, it at least dispels the night thoughts that oppress the heart and shifts into the symbol that the souls maimed by doubt and lurking in the dark abyss of dubiety are longing for. Charents does not prescribe a way to salvation, but he regards the mission of carrying the torch of faith and hope above the heads of the people as the spiritual foundation for defying desolation.

Ներկայացվել է 29.01.2024 թ.

Գրախոսվել է 27.02.2024 թ.

Ընդունվել է տպագրության 30.05.2024 թ.